

ՄԻՆԻՄՈՒՄ-ԲԱՌԱՐԱՆ ԿԱԶՄԵԼՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Բ. Կ. ՂԱԶԱՐՅԱՆ

Մինիմում-բառարանների ստեղծումը հետապնդում է տարբեր նպատակներ ու խնդիրներ: Սակայն անկախ այդ նպատակներից ու խնդիրներից յուրաքանչյուր մինիմում-բառարան սովորողների կամ ուսումնասիրողների համար տվյալ էտապում այն առավելագույնն է, որի յուրացմամբ նրանք հնարավորություն են ստանում կատարելու ինֆորմացիայի փոխանակություն, մինչդեռ լեզվական իմաստային միավորների ընդգրկման տեսակետից տվյալ լեզվում այդ նույն առավելագույնը համարվում է նվազագույն ընտրանք:

Այստեղ մեզ հիմնականում հետաքրքրում է այն հարցը, թե այդ նվազագույն ընտրանքի, այսինքն՝ բառերի նշված մինիմումի առանձնացումն ի՞նչ սկզբունքների հիման վրա է կատարվում: Այդ հարցի վերաբերյալ մեզանում գոյություն ունի հիմնականում երկու տեսակետ, որոնք սկզբունքորեն տարբեր են իրարից:

Առաջին տեսակետի ներկայացուցիչներն են Ռ. Մ. Ֆրումկինան, Յու. Մարկովը, է. Շտեյնֆելդը, Լ. Սայախովան և ուրիշները, որոնք բառերի մինիմում ընտրելիս ելակետային հիմք են ընդունում վիճակագրական հետազոտությունների սահմանած հաճախականության շափանիշը: Մյուս տեսակետի կողմնակիցները՝ Ի. Ռախմանով, Վ. Կոստոմարով և այլք, պնդում են, որ վիճակագրական վերլուծությունների տվյալները հավաստի չեն և մինիմում-բառարանի կազմման համար ելակետային հիմք ծառայել չեն կարող: Կանգ առնենք այդ հակադիր տեսակետների վրա առանձին-առանձին:

Պրոֆ. Ռախմանովը հավատ չի ընծայում վիճակագրական ուսումնասիրությունների տվյալների հավաստիությանը, առարկելով, թե բառերի կրկնության գործակիցը սկսած երկրորդ հազարից այնքան է փոքրանում, որ այլևս այն չի կարող համոզիչ ապացույց հանդիսանալ՝ հաստատելու որևէ բառի լայն տարածվածությունը տվյալ լեզվում¹: Ռախմանովի այս դրույթի անհիմն լինելն իր ամբողջ պարզությամբ ցույց է տվել Յու. Մարկովը²: Մենք կանգնեցնենք նրա մի քանի այլ առարկություններին, որոնց միջոցով նա ցանկանում է ստվեր գցել վիճակագրական սկզբունքի վրա:

Քննադատելով Քեդինգին, Ռախմանովը գտնում է, որ նրա հաճախականության բառարանում, որպես առավել գործածական բառեր, տեղ են գտել այնպիսիները, որոնց ներգրավումն այդ բառարանում անարդարացի է: Այդպիսի բառերի թափանցումը հաճախականության բառարան նա բացատրում է վիճակագրական վերլուծությունների ենթարկված գրականության կամայական ընտրանքով: Նախ նշենք, որ Ռախմանովը մոռանալով, որ ինքը չի

¹ «Словарь наиболее употребительных слов» (англ., немец. и франц. языков), М., 1961, стр. 5.

² Ю. Марков, О роли лексической статистики при отборе словарного минимума, «Русский язык в национальной школе», 1963, № 4.

ցանկանում ընդունել այդպիսի բառերի ավելի գործածական լինելը, բայց դրանք մտցնում է իր կազմած առավել գործածական բառերի մինիմումի՝ մեջ: Նա քննադատելով բառերի ընտրման հաճախականության չափանիշը, սրա հիմնական թերությունը համարում է նաև տեքստերի ընտրման սկզբունքը, որը դրվում է վիճակագրական հաշվումների հիմքում: Ըստ նրա, հաճախականության բառարանի կազմման համար ընտրված տեքստերում ներդրվում է այնպիսի գրականություն (խոսքը արտասահմանյան որոշ երկրներում հրատարակված հաճախականության բառարաններին է վերաբերում), որի մեջ արտահայտված են բուրժուական գաղափարախոսության հազեցված գործեր՝ աստվածաշունչ, բուրժուական մամուլ, բուլվարային վեպեր՝ և այլն: Այդ առարկությամբ Ռախմանովը չի ցանկանում տարբերել առնվազն երկու կարևոր հանգամանք: Նախ, նա չպետք է շփոթի, որ հաճախականության սկզբունքը և տեքստերի ընտրումը, չնայած սերտորեն կապված են իրար հետ և պայմանավորված միմյանցով, նույնական չեն: Եվ երկրորդ, եթե որևէ հաճախականության բառարան կազմող տեքստերի ընտրմանը մոտենում է ոչ օբյեկտիվորեն ու հանգում անցանկալի արդյունքների, այստեղ մեղավորը հաճախականության սկզբունքը չէ, որը սուբյեկտիվորեն քննադատում է հեղինակը: Մեղավորն այն հետադոտորն է, որը չի կարողանում ճիշտ կողմնորոշվել իրական փաստերի մեջ: Մինչդեռ ոչ նպատակահարմար տեքստերի ընտրումը կարող է հասցնել վերլուծական տվյալների միակողմանիության: Դրա համար էլ հիմնականը ոչ միայն անհրաժեշտ ծավալի տեքստերի ընտրությունն է, այլև այն, թե ինչպիսի՞ տեքստեր պետք է ընտրել: Ինչ խոսք, ընտրանքում պետք է ընդգրկել այնպիսի տեքստեր, որոնք ավելի օբյեկտիվորեն են արտահայտում լեզվի համապատասխան բնագավառում գործող լեզվական միավորների գործածության ռեալ փոխհարաբերությունները:

Պրոֆ. Ռախմանովն անվստահությամբ վերաբերվելով վիճակագրական ուսումնասիրություններին և դրանով իսկ՝ նաև հաճախականության չափանիշին, իր հերթին առաջ է քաշում բառերի մինիմումի առանձնացման մի շարք սկզբունքներ³: Դրանք բաժանվում են երկու մասի՝ գլխավոր սկզբունքներ (կապակցելիություն, ոճական անսահմանափակություն, իմաստային արժեք), և լրացուցիչ սկզբունքներ (բառակազմական արժեք, բազմիմաստություն, կառուցվածքային ընդունակություն, հաճախականություն): Այդ ըսկզբունքները բացատրվում են հետևյալ կերպ. «կապակցելիության սկզբունք» նշանակում է, թե տվյալ բառը ինչպիսի՞ փոխհարաբերության մեջ կարող է մտնել այլ բառերի հետ: Ոճական անսահմանափակության տակ հասկացվում են այնպիսի բառեր, որոնք ոճի տեսակետից շատ ազատ են և չեն սահմանափակվում միայն բանավոր կամ գրավոր խոսքում: Այդպիսի բառերը չգիտեն նաև տերիտորիալ սահմանափակումներ: «Իմաստային արժեք» սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ մինիմում-բառարանի մեջ կարող են մտնել հասկացություն ու երևույթ արտահայտող այնպիսի բառեր, որոնք ավելի հաճախ են գործածվում գրականության մեջ: Բառակազմական արժեքը ցույց է տալիս, թե տվյալ բառը ինչպիսի՞ բառակազմական

³ «Словарь наиболее употребительных слов», стр. 319, 324, 377.

⁴ Նույն տեղում, էջ 6:

⁵ Նույն տեղում, էջ 10:

ընդունակությամբ է օժտված և ըստ այդմ էլ այն մտցվում է մինիմում-բա-
ռարանի մեջ: Բազմիմաստությունն ասելով, պետք է հասկանալ, որ բառը
ինչքան շատ տարբեր նշանակություններ ունենա, այնքան նրա իմանալը
կարևոր է: «Կառուցվածքային ընդունակություն» սկզբունքը վերաբերում է
ժամանակ բառերին, որոնք կապակցության մեջ են մտնում տարբեր բառերի
հետ և այլն:

Ռաիմանովի առաջարկած այս սկզբունքները, անկախ այն բանից՝ ինքը
ցանկանում է, թե ոչ, անառարկելիորեն հաստատում են, որ բառերի մինի-
մումի ընտրման ամենապատակահարմար ու օբյեկտիվ սկզբունքը հաճա-
խականության չափանիշն է: Այդ հաստատելու համար սխեմատիկ գծերով
չենք հիշյալ հեղինակի շարադրած սկզբունքները: Սկսենք առաջինից: Մի-
թե կարող է որևէ կասկած հարուցել այն պնդումը, որ լեզվում համեմատա-
բար ավելի հաճախ հանդես եկող բառերը կարող են ավելի շատ բառերի հետ
փոխհարաբերությունների մեջ մտնել: Կասկածից վեր է նաև, որ հարա-
բերականորեն բարձր ու միջին հաճախականություն ունեցող բառերը, ոճի
տեսակետից, համապատասխանաբար ավելի անկախ են և չեն սահմանա-
փակվում տերիտորիալ շրջանակներով: Բառերի իմաստային արժեքը հեղի-
նակը կապում է թեմատիկության հետ: Բայց այստեղ նույնպես վճռական
խոսքը պատկանում է վիճակագրական ուսումնասիրությանը, քանի որ ա-
ռանց դրա հետազոտողը հնարավորություն չի ունենա գիտականորեն սահ-
մանելու որևէ բառի իսկական տեղը տվյալ թեմատիկ կտրվածքում: Իսկ բա-
ռակազմական արժեքն ու բազմանշանակությունը մի ավելորդ անգամ ցույց
են տալիս, որ ինչպես բառակազմական մեծ ընդունակությամբ օժտված բա-
ռերը, այնպես էլ բազմանշանակ բառերն ունեն համեմատաբար ավելի բարձր
հաճախականություն: Այդ բանի օգտին է խոսում նաև այն փաստը, որ հա-
ճախականության բառարանի առաջին հազար բառում ածանցյալ բառերի
թիվը շատ ավելի մեծ է, քան երկրորդ հազարում: Ինչ վերաբերում է բազ-
միմաստությանը, ապա այստեղ առանձնապես անհրաժեշտ է նշել, որ առ-
այժմ հաճախականության սկզբունքը սրա վրա հարկ եղած ուշադրություն
չի դարձնում, որովհետև հաճախականության բառարանները հիմնականում
սահմանում են բառերի ձևական հաճախականությունը: Մինչդեռ հայտնի է,
որ ամեն մի լեզվի իմաստային համակարգում նշանակություններն ավելի
շատ են, քան բառերը: Դրա համար էլ այս կամ այն բառը կարող է արտա-
հայտել մեկ և ավելի նշանակություններ: Ըստ որում տվյալ բազմիմաստ բա-
ռի ոչ բոլոր իմաստներն են, որ կարող են ունենալ հավասար արժեք ու տա-
րածում: Այնպես որ, այդ խնդիրների լուծումն ու բազմանշանակության չա-
փանիշի ավելի ունալ սահմանումը անհրաժեշտորեն պետք է հենվեն վիճա-
կագրական ուսումնասիրությունների վրա: Այդ չափանիշի ժամանակավոր
թերացումը պայմանավորված է վիճակագրական մեթոդի դեռևս ոչ լրիվ կա-
տարելագործմամբ: Կառուցվածքային ընդունակության սկզբունքի կապը
հաճախականության սկզբունքի հետ ավելի ցցուն է: Վիճակագրական բոլոր
ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ամենաբարձր հաճախականու-
թյամբ հանդես եկող բառերը օժանդակ են: Թվարկած բոլոր սկզբունքների
քննումը ցույց է տալիս, որ այդ սկզբունքները ի վիճակի չեն օբյեկտիվորեն
բացահայտելու լեզվում գործող միավորների հարաբերականորեն ունալ փոխ-

հարարերություններն ու նրանց օգտագործման համեմատական համամասնությունները:

Եթե մինիմում-բառարան կազմելիս առաջնորդվենք Ռախմանովի առաջարկած ևրև գլխավոր սկզբունքներով, ապա կազմված մինիմում-բառարանը այնքան կծանրարեոնվի, տվյալ դեպքում, ոչ այնքան կարևոր բառերով, որ իրականում կդադարի մինիմում լինելուց: Այդ տխուր փաստի⁶ առջև կանգնել է առաջին հերթին ինքը՝ Ռախմանովը, իր հեղինակակիցների հետ՝ անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն լեզուներով վերոհիշյալ մինիմում-բառարանը կազմելիս: Ստացված բառերի մեծ ծավալը նրանք ստիպված են եղել կրճատել իրենց լրացուցիչ սկզբունքների օգնությամբ: Այստեղ անհրաժեշտ է շեշտել, որ նրանց մինիմում-բառարանի անգլերեն լեզվին վերաբերող մասի վերլուծությունը⁷ ցույց է տվել, որ հեղինակները (հակառակ իրենց կամքին) մինիմումի էնջ ընդգրկված բառերի 80 տոկոսը վերցրել են Թորնդայկի ու Լոջի անդերեն լեզվի հաճախականության բառարանից, իսկ մնացած 20 տոկոսը սուբյեկտիվ մոտեցման արդյունք է: Հաճախականության սկզբունքի կարևորությունն ու մինիմումի առանձնացման գործում նրա վճռական գործոնի դերը այնքան ակնառու են, որ, ինչպես տեսնում ենք, վիճակագրական մեթոդի հակառակորդները նույնիսկ, իրենց տեսակետն անտեսելով, բառերի մինիմում ստեղծելիս հենվում են հաճախականության բառարանների տվյալների վրա:

Առատ փաստերին ընդդեմ գնալով, Կոստոմարովը նույնպես ձգտում է թերագնահատել վիճակագրական հետազոտությունների կարևորությունը և մինիմում բառապաշարի առանձնացման գործում առաջնորդվում է Ռախմանովի ղեկավարությամբ մշակված վերոհիշյալ սկզբունքներով: Նա գտնում է, որ դործականում հաճախականության սկզբունքը չի կարող վճռական նշանակություն ունենալ մինիմում-բառարանի կազմման գործում, քանի որ այն հակասության մեջ է մտնում այնպիսի կարևոր սկզբունքների հետ, ինչպես՝ «թեմատիկ», «իմաստային արժեք» սկզբունքներն են: Այդ պնդումը, ինչպես արդեն ցույց ենք տվել, լուրջ հիմնավորում չունի և երբեք չի կարող հիմք հանդիսանալ՝ ետին պլան մղելու հաճախականության սկզբունքը: Կոստոմարովն այնքան հեռու է գնում, որ հասնում է փաստերի խեղաթյուրման, գտնելով, թե ուսաց լեզվի ամենահաճախ գործածվող 800 բառը (ըստ Պուշկինի լեզվի բառարանի) կազմում է տեքստի ծավալի 2 տոկոսը, իսկ 6-ից մինչև 20 անգամ գործածված բառերը՝ 90 տոկոս⁸: Սակայն վիճակագրական ուսումնասիրությունները պարզել են, որ Պուշկինի բառապաշարի ամենահաճախ գործածված 200 բառը կազմում է նրա ամբողջ տեքստի (մոտ կես միլիոն բառ) 52 տոկոս, իսկ 800 բառը՝ ոչ թե 2 տոկոս (ինչպես գրում է Կոստոմարովը), այլ՝ մոտ 70 տոկոս, 6—20 անգամ օգտագործված բառերը 90 տոկոսի փոխարեն՝ միայն 20 տոկոս⁹ և այլն:

Յրումկինան, Զասորինան, Մարկովը և մյուսները բառերի մինիմումի առանձնացման համար ելակետային հիմք են ընդունում վիճակագրական հե-

⁶ Նույն տեղում, էջ 10—11:

⁷ Տե՛ս Յու. Մարկովի նշված հոդվածը, էջ 17:

⁸ В. Костомаров, Принципы отбора лексического минимума, «Русский язык в национальной школе», 1963, № 1.

⁹ Р. М. Фрумкина, Статистическая структура лексики Пушкина, «Вопросы языка», 1963, № 3, Ю. Марков, указ. статья.

տաղտոտությունների օգնությամբ կազմված հաճախականության բառարանները, որոնց տվյալներն արտահայտում են հաղորդակցության պրոցեսում բառերի հարաբերական գործածությունների աստիճանները: Սրանք չեն ընդունում Ռախմանովի առաջ քաշած վեց գլխավոր ու լրացուցիչ սկզբունքները որպես միևնույն բառապաշարի ընտրման հիմնական և ինքնուրույն սկզբունքներ, քանի որ այդ սկզբունքները սերտ կապի մեջ են բառերի հաճախականության հետ ու հիմնականում իրականացվում են հաճախականության սկզբունքի շրջանակներում:

Է. Շտեյնֆելդը¹⁰, լինելով այդ տեսակետի ներկայացուցիչներից մեկը, մատնանշում է, որ վիճակագրական հաշվումների վրա հենված հաճախականության բառարանը միևնույն-բառարանի կազմման աշխատանքների միայն առաջին անհրաժեշտ փուլն է: Հիմնականը համարելով հաճախականության սկզբունքը, նա հատուկ ուշադրություն է դարձնում նաև այն սկզբունքների օգտագործմանը, որոնց միջոցով հաճախականության ցուցակից բառերի ընտրություն է կատարվում միևնույն-բառարանի համար: Գլխավորապես հաճախականության սկզբունքից ելնելով էլ, Շտեյնֆելդը կազմում է ռուսաց լեզվի առաջին ուսումնական միևնույն-բառարանը¹¹ էստոնական դպրոցների համար:

Ուշագրավ է նաև Լ. Սայախովայի¹² մոտեցումն այդ հարցում: Նա քննադատելով ու մերժելով դասագրքերից ու բացատրական բառարաններից բառերի ընտրման ոչ օբյեկտիվ չափանիշները, ուսումնական նպատակների համար բառերի միևնույն ընտրելիս ելնում է հետևյալ սկզբունքներից՝ հաճախականության սկզբունք, սովորողների տարիքային առանձնահատկությունների հաշվի առնումը, թեմատիկ սկզբունք, բառերի կապակցելիության սկզբունք և կապը ուսուցանվող քերականության հետ: Այդ սկզբունքներից առաջին երկուսը դիտում է որպես հիմնական սկզբունքներ, իսկ մնացած երեքը՝ լրացուցիչ: Հաճախականությունն ընդունելով որպես հիմնական սկզբունք, Սայախովան ելնում է այն դրույթից, որ լեզվին ավելի արագ տիրապետելու համար սովորողները պետք է ամենից առաջ յուրացնեն տվյալ լեզվի առավել հաճախ օգտագործվող բառերը: Իսկ այդպիսի բառերը վիճակագրական ուսումնասիրությունների վկայությամբ՝ կազմում են ամեն մի համապատասխան տեքստի հիմքը: Ուստի և լեզու սովորող ամեն մի մարդու համար նման բառեր իմանալը խիստ անհրաժեշտ է: Ահա թե ինչու, ամենահաճախ հանդես եկող բառերը պետք է միևնույն-բառարանի կորիզը հանդիսանան:

Սովորողների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելու սկզբունքը, ըստ հեղինակի, նույնպես համարվում է հիմնական, քանի որ ուսումնական նպատակներով կազմված միևնույն-բառարանում պետք է ընդգրկվեն նաև այնպիսի բառեր, որոնք մանկական գեղարվեստական գրականության մեջ, մանկական թերթերում ու ամսագրերում, մանուկների համար կազմակերպված ռադիոհաղորդումներում և այլուր հանդես են գալիս ավելի

¹⁰ Э. Штейнфельдт, Частотный словарь современного русского литературного языка, «Русский язык в национальной школе», 1962, № 4.

¹¹ Э. Штейнфельдт, Словарь-минимум русского языка для II—V кл. эстонских школ, 1961.

¹² Л. Саяхова, Опыт составления словаря-минимума для нерусской школы на основе частотных словарей, «Русский язык в национальной школе», 1964, № 3.

բարձր հաճախականությամբ: Այդ պատճառով էլ դպրոցական մինիմում-բառարան կազմելիս հաճախականության սկզբունքը լինելով լեզվաբանական չափանիշ, սերտ կապի մեջ է մտնում ինչպես լեզվական այլ չափանիշների, այնպես էլ ոչ լեզվական, այսինքն՝ մեթոդական չափանիշների հետ. ասենք՝ մանկավարժական սկզբունք, ուսուցման նպատակ, տարիքային առանձնահատկությունների հաշվի առնելը, տեղական պայմանների գնահատում և այլն: Բառապաշարի ու բերականության կապի հաշվառման սկզբունքը դիտվում է որպես լրացուցիչ չափանիշ: Այս կապակցությամբ Սայախովյան նշում է, որ սովորողները տիրապետելով բերականական այս կամ այն ձևին վերաբերող ամենահաճախ օգտագործված բառերի մի որոշակի քանակի, ըստ նմանողության՝ հեշտությամբ կարող են կազմել բերականական տվյալ ձևին պատկանող նաև այլ բառեր: Այդ հանգամանքը պարտավորեցնում է՝ բառարան կազմելիս նկատի ունենալ նաև այս չափանիշը: Սայախովյանի մյուս լրացուցիչ սկզբունքների վրա հարկ չենք համարում կանգ առնել, քանի որ դրանց մասին խոսել ենք այլ առիթներով:

Ուսումնական և այլ նպատակների համար մինիմում-բառարանի կազմման՝ Սայախովյանի վերոհիշյալ տեսակետի հետ սկզբունքորեն համաձայնելով, չենք կարող, սակայն, շառարկել այն պնդման դեմ, թե հաճախականության սկզբունքի հետ մեկտեղ սովորողների տարիքային առանձնահատկությունների հաշվառման չափանիշը հիմնական սկզբունք է: Չնսեմացնելով այդ սկզբունքի կարևոր նշանակությունը ուսուցման նպատակով մինիմում-բառարանի կազմման գործում, չենք կարող, միաժամանակ, հավասարության նշան դնել այդ երկու սկզբունքների միջև: Հաճախականության սկզբունքը չունի իրեն հավասարաթեք այլ չափանիշ, որը կարողանա մինիմումի առանձնացման գործում այնքան վճռական դեր կատարել: Այն առավել հուսալի և հիմնական է, որ հենվում է վիճակագրական օբյեկտիվ ուսումնասիրությունների վրա: Հեղինակի վերոհիշյալ սկզբունքը կարելի է դասել միայն լրացուցիչ սկզբունքների շարքը:

Բառերի մինիմումի մշակման ուշադրության արժանի ընդհանուր սկզբունքներ են սահմանել Չեխոսլովակիայի գիտությունների ակադեմիայի օտար լեզուների ամբիոնի աշխատակիցները¹³: Սրանց համար շատ կարևոր նշանակություն ունի որևէ օտար լեզվի ուսումնասիրման նպատակը:

Որոշակի նպատակներից ելնելով՝ բառերի մինիմում ընտրելիս հիշյալ ամբիոնի աշխատակիցները առավել հարմար չափանիշը, առաջին հերթին, համարում են հաճախականության սկզբունքը: Միևնույն ժամանակ չեն մոռանում հիշեցնել, որ հաճախականության բառարանների տվյալները կարող են ունենալ որոշ սահմանափակություններ¹⁴, որոնց պատճառով էլ հաճախականության սկզբունքը առաջարկում են զուգակցել այլ սկզբունքների հետ:

Մինիմում-բառարանի կազմման համար ընդհանուր առմամբ ընդունում են բառերի ընտրման հետևյալ սկզբունքները.

¹³ «Общие принципы разработки лексического минимума» (кафедра иностранных языков Чехословацкой АН), Прага. «Русский язык в национальной школе», 1965, № 1.

¹⁴ Այդ թերություններն են. հաճախականության բառարանների տվյալները հուսալի են միայն որոշակի սահմաններում, հետազոտված նյութը որոշ ժամանակից հետո հնանում է, բանավոր խոսքի տվյալներն անբավարար են ուսումնասիրում, իմաստային արժեքներն իրարից հաճախ չեն տարբերվում և այլն:

1. Վիճակագրական չափանիշ (հաճախականություն և բաշխում), 2. Թեմատիկության չափանիշ (բառերի նշանակությունը յուրաքանչյուր թեմատիկ կտրվածքում), 3. Բառագիտական չափանիշ (ոճի շեղություն, կապակցություն, բազմիմաստության և բառակազմական սկզբունքների հաշվի առնելը), 4. զուգադրման չափանիշ (նմանությունը և տարբերությունը սովորողների մայրենի լեզվի հետ), 5. դիդակտիկ բնույթի չափանիշներ (բառի օրինակելիությունը և կարևորությունը ուսուցման պրոցեսում և այլն):

Եթե ավելի մանրամասն կանգ առնենք այդ սկզբունքների վրա, ապա կտեսնենք, որ հաճախականության սկզբունքն իր առաջատարությամբ հանդերձ չի անտեսում նաև այլ սկզբունքների գոյությունը, որոնք նպաստում են ամբողջականացնելու միեմում-բառարանի այն թերի կողմերը, որոնք արդյունք են հաճախականության չափանիշի մեկուսի օգտագործման: Մատնանշված լրացուցիչ սկզբունքները, ինչպես շեշտում են շեխոսլովական հեղինակները, իրենց ներսում նույնպես հաշվի են առնում հաճախականության սկզբունքը, այլապես արդյունքները կպարուրվեն սուբյեկտիվության մշուշով: Այսպես՝ ոճական անսահմանափակության սկզբունքը կիրառելիս պետք է ելնել ոճական արտահայտությունների հաճախականությունից¹⁵ և բառերի միեմումի մեջ առաջին հերթին ընդգրկել ոճական այն ձևը, որն ավելի հաճախ է օգտագործվում: Կամ՝ բառերի բազմանշանակության չափանիշը չի կարող ինքնուրույն կերպով օբյեկտիվորեն որոշել, թե տվյալ բազմիմաստ բառն իր ո՞ր նշանակությամբ է ավելի հաճախ հանդես գալիս հաղորդակցության պրոցեսում: Մինչդեռ միեմում-բառարանի մեջ անհրաժեշտ է մտցնել բազմիմաստ բառն իր առավել կիրառելի նշանակություններով միայն:

Նույն բանը կարելի է ասել նաև թեմատիկ սկզբունքի վերաբերյալ: Համապատասխան միեմում կազմելիս կարևոր հանգամանք է համարվում օտար և մայրենի լեզուների նմանություններն ու տարբերությունները նկատի ունենալը, որը իրագործվում է զուգադրման չափանիշի կիրառմամբ: Ուսումնական միեմում բառապաշարի ընտրման հարցում նշանակալի գեր ունի նաև դիդակտիկ սկզբունքը, բառերի օգտագործման նպատակահարմարությունը՝ մանկավարժական տեսակետից և այլն:

Չեխոսլովակիայի գիտությունների ակադեմիայի վերոհիշյալ ամբիոնի մասնագետները բառերի միեմումի ստեղծման խնդիրներում ցուցաբերում են օբյեկտիվ մոտեցում, ամբողջապես գիտակցելով ուսուցման պայմանների ու ընթացքի բազմազանությունը և մշտական փոփոխականությունը: Այդ բոլորն ավելի են բարդացնում բառերի միեմումի ընտրման գործը և հանգեցնում են նշված տարբեր չափանիշների միաժամանակյա օգտագործմանը:

Սխալ կլիներ կարծել, որ հիմնականում վիճակագրական տվյալների վրա հենված միեմում-բառարանի հարստացումը սահմանափակվում է միայն վերոհիշյալ չափանիշների կիրառմամբ: Միեմում-բառարանի լրացումը կարելի է հասցնել լավագույն սահմանների նաև իմաստային բազմապատկիչների մեթոդի օգնությամբ, որը աններելիորեն արձագանք չի գտել ո՛չ մեր, ո՛չ էլ չեխ հեղինակների մոտ: Այդ սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ հաճախականության չափանիշի օգնությամբ սահմանված բառերի ոչ մեծ խմբի միջոցով կարելի է նկարագրել տվյալ լեզվի մեծ թվով բառերի նշանակու-

¹⁵ Ոճական արտահայտությունների հաճախականությանը վերաբերող տեղեկություններ են տալիս Տեղեկությունների և մասամբ էլ Ջոսելտոնի հաճախականության բառարանները:

թյունները: Այդ ուղղությամբ նշանակալի աշխատանք է կատարվել Ֆրանսիայում: Վիճակագրական մեթոդի ու այլ շափանիշների օգնությամբ Գոգենհայմի, Միշլայի և մյուսների առանձնացրած ֆրանսերեն լեզվի բանավոր խոսքում առավել հաճախ օգտագործված 1368 բառի հիման վրա հետազայում կազմվեց 3000 բառ պարունակող մինիմում-բառարան, որը երկրորդ անգամ հրատարակվեց 1961 թ.¹⁴ արդեն 3500 բառով¹⁵: Այս լրացված մինիմում-բառարանի յուրաքանչյուր բառը Գոգենհայմը բացատրել է վերոհիշյալ բառարանի 1368 բառի օգնությամբ: Այդ մեթոդը մեզանում օգտագործվում է միայն մեքսիկական թարգմանության մեջ և մինիմում-բառարանների կազմման գործում մասնակցություն չի ցուցաբերում: Մի բան, որն արդարացնել չի կարելի: Բառերի մինիմումի կազմման հարցում թեմատիկ սկզբունքի հետ միասին իր նպաստավոր խոսքը կարող է ասել իմաստային դաշտի մեթոդը, որը նույնպես անուշագրության է մատնված: Իմաստային դաշտի շափանիշի մեջ, անշուշտ, պետք է կիրառվի հաճախականության սկզբունքը, քանի որ յուրաքանչյուր իմաստային դաշտում ընդգրկված լեզվական բոլոր միավորները միանման կիրառում ու օգտակարություն չունեն:

Սրանք են այն հիմնական մեթոդներն ու սկզբունքները, որոնց խելացի ու օբյեկտիվ կիրառման շնորհիվ կարելի է առանձնացնել, ինչպես հայոց, այնպես էլ այլ լեզուներում այնպիսի մինիմում բառապաշար, որը հիմնավորապես կկարողանա բավարարել այն բոլոր պահանջներն ու խնդիրները, որոնք նախօրոք առաջադրվում են ամեն մի մինիմումի համար:

ПРИНЦИПЫ СОСТАВЛЕНИЯ СЛОВАРЯ-МИНИМУМА

Б. К. КАЗАРЯН

Р е з ю м е

В вопросе составления словаря-минимума основополагающим мы считаем принцип частотности. Наряду с этим важно учитывать и принципы «семантического поля» и «семантических множителей», с помощью которых можно пополнить словарь-минимум.

¹⁴ G. Gougenheim, Dictionnaire fondamental de la langue française, neuve édition, Didier, Paris, 1961.